ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «02» 08 2014 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 19 –Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2015» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման Հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Կազմակերպել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2015» մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելվածի:

3. Մրցույթի արդյունքների հաստատման և գիտական ծրագրերի ցանկերում կատարվող փոփոխությունների լիազորությունը վերապահում եմ ինձ:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2014 թ. օգոստոսի 2-ի
թիվ 19-Ա/Ք հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2015» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ

ՀՐԱՎԵՐ

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետև՝ Կոմիտե) և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի (ՌԴ) (այսուհետև՝ Հիմնադրամ) միջև 2010 թվականի մայիսի 7-ին կնքված «Համագործակցության մասին» համաձայնագրի և 2012 թվականի փետրվարի 28-ին կնքված գիտական ծրագրերի մրցույթի անցկացման մասին լրացուցիչ պայմանագրի շրջանակներում, Կոմիտեն և Հիմնադրամը, ցանկանալով խթանել հիմնարար գիտական հետազոտությունների ոլորտում երկկողմ համագործակցությունը, հայտարարում են գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության **«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2015» մրցույթ (**այսուհետև՝ Մրցույթ**)**՝ գիտության հետևյալ բնագավառներով**.**

1. **Բնական գիտություններ,**
2. **Ճարտարագիտություն և տեխնոլոգիա,**
3. **Բժշկական գիտություններ:**

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված նախագծերի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի «Միջազգային գիտական համագործակցություն» ծախսային ենթածրագրի ֆինանսական միջոցների հաշվին:

1.2. Սույն Մրցույթի մասնակցության գիտական նախագծերի հայտերը (այսուհետև՝ Հայտ) ներկայացվում են հայ և ռուս գիտնականներից կազմված խմբերի կողմից՝ հայկական կողմից ներառելով մինչև 4 մասնակից՝ ներառյալ խմբի ղեկավարը (այսուհետև՝ Ղեկավար):

1.3. Սույն Մրցույթին ներկայացնելով հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող գիտական նախագծի հայտ կամ Մրցույթի արդյունքում երաշխավորված ծրագրի իրականացման ընթացիկ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվություն, Ղեկավարը պարտավոր է գործել 2006 թ. հունիսի 15-ին ընդունված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-142-Ն) սահմանված դրույթներին համապատասխան:

1.4. Կոմիտեի կողմից ֆինանսական աջակցություն ստանալու դեպքում մասնակիցները պարտավորվում են.

- իրականացված հետազոտության արդյունքները ռուսական կողմի մասնակիցների հետ համատեղ հրապարակել գրախոսվող ամսագրերում մինչև ամփոփիչ հաշվետվություն ներկայացնելը,
- հետազոտությունների արդյունքները հրապարակելիս նշել Կոմիտեի կողմից տրամադրված աջակցության մասին՝ նշելով գիտական ծրագրի ծածկագիրը, օրինակ՝

  Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի ___ և ՀՀՌՀ (ՌԴ) ___ գիտական համատեղ ծրագրերին տրամադրված ֆինանսական աջակցության միջոցների շրջանակներում:

  Исследование выполнено при финансовой поддержке ГКН МОН РА и РФФИ (РФ) в рамках совместных научных программ ___ и ____ соответственно.

  This work was supported by the RA MES State Committee of Science and Russian Foundation for Basic Research (RF) in the frames of the joint research projects SCS _____ and RFBR ____ accordingly.
- տալ համաձայնություն ֆինանսավորման երաշխավորված Հայտի և ընթացիկ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվությունների անոտացիաների տպագիր կամ էլեկտրոնային եղանակով Կոմիտեի կողմից հրապարակման համար,
- իրականացված համատեղ ծրագրի շրջանակներում ստացված գիտական արդյունքի նկատմամբ հեղինակային իրավունքի շուրջ ծագած հարցերը լուծել խորհրդակցությունների և քննարկումների միջոցով:

1.5. Արգելվում է ՝

- միևնույն գիտական ծրագրի նախագիծը ներկայացնել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող այլ մրցույթների,
- Կոմիտեի կողմից ֆինանսավորվող այլ մրցույթներին մասնակցության համար արդեն իսկ ներկայացված նախագիծը կամ ֆինանսավորման երաշխավորված գիտական ծրագիրը (թեման) ներկայացնել սույն Մրցույթին:

1.6. Սույն Մրցույթի շրջանակներում ներկայացված Հայտը չի քննարկվում, եթե վերջին 3 (երեք) տարում նույն Ղեկավարի կողմից Կոմիտեի աջակցությամբ իրականացված գիտական ծրագրի (թեմայի) վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ գիտական փորձաքննություն իրականացնող մասնագիտական փորձագիտական խորհրդի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

1.7. Ղեկավարը և կազմակերպությունը (կամ բուհը), որտեղ իրականացվելու է ծրագիրը, պետք է լինեն պաշտոնապես ձևակերպված աշխատանքային և քաղաքացիաիրավական հարաբերություններում կամ մասնակցելով սույն Մրցույթին՝ պարտավորվում են ձևակերպել այդպիսի հարաբերություններ ֆինանսավորման երաշխավորվելու դեպքում: ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր ֆինանսավորման երաշխավորված գիտական ծրագրի Ղեկավարի և մասնակիցների միջև, ինչպես նաև գիտական կազմակերպության (կամ բուհի) տնօրենի (ռեկտորի) և Ղեկավարի միջև:

1.8. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված գիտական ծրագրի Ղեկավարի միջև ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր՝ 1.7-րդ կետում նշված պայմանագրերի առկայության դեպքում:

1.9. Սույն Մրցույթին մասնակցությունը, անկախ դրա արդյունքներից, չի խոչընդոտում հայտատուին մասնակցելու Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթներին:

1.10. Սույն Մրցույթի հայկական և ռուսական կողմի հայտատուները միմյանց հետ համաձայնեցնում են ներկայացվող նախագծի բովանդակությունը, որը կարող է կողմերի մոտ տարբերվել՝ կախված կողմերի առջև դրված խնդիրներից: Սակայն ներկայացված նախագծի հայերեն և ռուսերեն անվանումը պետք է ամբողջությամբ համընկնեն: Վերջնական ձևավորված և համաձայնեցված Հայտը հայկական կողմը ներկայացնում է Կոմիտե, իսկ ռուսական կողմը՝ Հիմնադրամ:

1.11. Սույն Մրցույթին չեն մասնակցում այն նախագծերի Հայտերը, որոնք՝

- ներկայացվել են միայն Կոմիտե կամ միայն Հիմնադրամ,
- Կոմիտե կամ Հիմնադրամ ստացվել են Հայտերի ընդունման համար հայտարարված ժամկետներից ուշ,
- լրացվել են ոչ ըստ Հայտերին ներկայացվող պահանջների,
- պարունակում են պետական կամ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկություններ:

1.12. Հայտի համապատասխանությունը վերը նշված պայմաններին երաշխավորում է Ղեկավարը:

2. Մասնակիցներին ներկայացվող պահանջները

2.1. Հայտը ներկայացնող բոլոր մասնակիցները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ, ինչպես նաև ծրագրի իրականացման ողջ ընթացքում պետք է բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Նախագծի հայկական խմբում կարող են ընդգրկվել գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններում և բուհերում աշխատող գիտնականները, գիտաշխատողները և դասախոսները, պետական պատվերով առկա և հեռակա ուսուցման ասպիրանտները, մագիստրատուրայի ուսանողները, բակալավրիատի երրորդ և չորրորդ տարվա ուսանողները:

2.3. Ղեկավար կարող է հանդիսանալ գիտական աստիճան ունեցող այն անձը, ով ունի առնվազն 5 (հինգ) տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն 5 (հինգ) հոդված:

2.4. Ղեկավար չի կարող լինել այն անձը, ով գտնվում է նախագծի մասնակցի վարչական ենթակայության տակ:

2.5. Որպես Ղեկավար մասնակիցը սույն Մրցույթին կարող է ներկայացնել միայն 1 (մեկ) նախագիծ: Որպես կատարող՝ մասնակիցները պետք է ներգրավված լինեն միայն 1 (մեկ) նախագծում:

2.6. Նախագծի հայկական խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ գիտաշխատող կամ ասպիրանտ կամ ուսանող:

2.7. Սույն Մրցույթին չեն կարող մասնակցել այն անձինք, ովքեր միաժամանակ հանդիսանում են Կոմիտեի կողմից ֆինանսավորվող որևէ 2(երկու) մրցույթների շրջանակներում հաղթող ճանաչված թեմաների (ծրագրերի) ղեկավարներ կամ այդ թեմաներում (ծրագրերում) ընդգրկված մասնակիցներ՝ բացառությամբ «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր–2013» մրցույթի շահառուների:

3. Հայտերի լրացման կարգը

3.1. Սույն Մրցույթի Հայտը լրացնում և ներկայացնում է Ղեկավարը՝ հայերենով և անգլերենով, Կոմիտեի Հայտերի և Հաշվետվությունների առցանց ներկայացման համակարգի (այսուհետև՝ Համակարգ) միջոցով՝ www.grants.scs. am:

3.2. Հայտ ներկայացնելու համար Ղեկավարը և նախագծի բոլոր մասնակիցները գրանցվում են վերը նշված Համակարգում, եթե մինչ այդ գրանցված չեն եղել: Գրանցված անձին նույնականացման համար շնորհվում է 12-նշանոց Անհատական կոդ և առաջարկվում է լրացնել «Անձնական տվյալներ» բաժինը: Համակարգում գրանցում ունեցող անձինք կարող են պարբերաբար վերանայել և լրամշակել Համակարգում արդեն ներմուծված տվյալները, ինչպես նաև մասնակցել այլ մրցույթներին:

Ուշադրություն. Ցանկացած անձ գրանցվում է Համակարգում միայն մեկ անգամ՝ ստանալով Համակարգում իր անհատական մշտական էջը:

3.3. Գրանցվելուց և համակարգ մուտք գործելուց հետո Ղեկավարը բացում է Մրցույթին Հայտ ներկայացնելու իր սեփական էջը և լրացնում է առաջարկվող էլեկտրոնային բաժինները (Տիտղոսաթերթ, Նախագիծ, Ֆինանսական նախահաշիվ, Տեղեկություններ կատարողի մասին), ինչպես նաև բեռնում է նախագծի հայերեն և անգլերեն տարբերակների ֆայլերը: Հավելված 2-ում բերված է այդ բաժինների համառոտ նկարագրությունը, իսկ կայքում տեղադրված է համապատասխան **Ուղեցույց**:

3.4. Մասնակիցների ցանկը ձևավորելիս Ղեկավարը համապատասխան դաշտում նշում է արդեն գրանցված և անձնական տվյալները լրացրած յուրաքանչյուր մասնակցի կողմից փոխանցված Անհատական կոդը, որից հետո Համակարգը մեխանիկորեն լրացնում է տվյալ մասնակցին վերաբերող բաժինը՝ օգտագործելով այդ մասնակցի անհատական էջում տվյալ պահին առկա տվյալները: Ղեկավարը համապատասխան մասնակցի հրապարակումներից ընտրում է ներկայացվող նախագծի հետ առչվող մինչև 5 (հինգ) հրապարակում:

3.5. Մասնակցի նույնականացման համարը նշելուց հետո տվյալ մասնակցի անհատական էջում տեսանելի են դառնում Ղեկավարի կողմից լրացվող Հայտի բոլոր բաժինները: Մասնակիցը կարող է խմբագրել միայն իր անձնական էջում պարունակվող անհատական տվյալները և իր հրապարակումների ցանկը, որոնք ինքնաբերաբար դառնում են տեսանելի Ղեկավարի կողմից լրացվող Հայտի մեջ:

3.6. Հայտը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ Տիտղոսաթերթ, Նախագիծ, Կատարողների տվյալներ և Ֆինանսական նախահաշիվ, որոնք բոլորը պետք է լինեն լրացված կամ բեռնված:

3.7. Հայտը լրացնելու ընթացքում Համակարգը իրականացնում է որոշ ստուգումներ և, եթե մուտքագրվող բոլոր տեղեկությունները համապատասխանում են Հրավերի պահանջներին, ապա ակտիվանում է Հայտի առցանց ուղարկման հնարավորությունը:

3.8. Հայտը հաջողությամբ ուղարկելու դեպքում այն ստանում է «Ուղարկված է» կարգավիճակ, գրանցվում է Համակարգում, ստանում է ծածկագիր: Հայտի վերջնական էլեկտրոնային պաշտոնական տարբերակը, որի մեջ ընդգրկվում են Ղեկավարի և մասնակիցների էջերում ուղարկման պահին առկա տեղեկությունները, ձևավորվում և տեղադրվում է հիմնական էջում: Ուղարկված Հայտը այլևս ենթակա չէ փոփոխությունների և Հայտի առցանց լրացման բոլոր էլեկտրոնային ձևերը արգելափակվում են:

3.9. Ծածկագիր ստացած Հայտի պաշտոնական տարբերակից Ղեկավարը պարտավոր է ներբեռնել Տիտղոսաթերթը և Ֆինանսական նախահաշիվը և մեկ օրինակ ներկայացնել Կոմիտե ստորև նշված ժամկետում: Վերջիններս պետք է ստորագրված լինեն համապատասխան Ձևերում նշված բոլոր անձանց կողմից: Կազմակերպության ղեկավարի կամ գիտական քարտուղարի ստորագրությունը պետք է հաստատվի կազմակերպության կնիքով:

4. Հայտերի ներկայացումը

4.1. Կոմիտե պետք է ներկայացվեն Հայտի և՛ էլեկտրոնային ամբողջական տարբերակը՝ ձևավորված Համակագում, և՛ տպագիր անհրաժեշտ փաստաթղթերը: Որևէ տարբերակի բացակայության դեպքում Հայտը համարվում է թերի և ենթակա չէ քննարկման:

4.2. Հայտի էլեկտրոնային տարբերակը լրացվում և ներկայացվում է grants.scs.am հասցեում, 2014 թվականի **օգոստոսի 4-ից մինչև 2014 թվականի հոկտեմբերի 14-ը** ներառյալ (մինչև 18:00-ն՝ Երևանի ժամանակով): Հայտի ուղարկման հնարավորությունը ավտոմատ արգելափակվում է 18:00-ից հետո:

4.3. Հայտի տպագիր տարբերակը Կոմիտե ներկայացվում է Ղեկավարի կողմից անձամբ՝ աշխատանքային օրերին, ժամը 10:00-13:00 և 14:00-17:00, քաղաք Երևան, Օրբելի

եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ)՝ **մինչև 2014 թվականի հոկտեմբերի 31-ը:** Այն ներկայացվում է սոսնձված ծրարով ու Ղեկավարի դիմումով (Հավելված N 3):

4.4. Հայտի տպագիր տարբերակը պարունակում է.

- Համակարգից ներբեռնված Տիտղոսաթերթը և Ֆինանսական նախահաշիվը պահանջվող ստորագրություններով և կնիքներով,
- խմբի մինչև 35 տարեկան ցանկացած անդամի ասպիրանտ կամ ուսանող հանդիսանալու մասին տեղեկանքները:

4.5. Կոմիտե ներկայացրած Հայտի տպագիր տարբերակի և Համակարգում ձևավերված էլեկտրոնային տարբերակի համապատասխանության համար պատասխանատու է Ղեկավարը:

Ուշադրություն. Հայտերը, որոնք չեն ուղարկվել ըստ վերը նշված կարգի և մինչև վերը նշված ժամկետը, չունեն ծածկագիր, հետևաբար, քննարկման ենթակա չեն: Կոմիտեն ընդունում է քննարկման միայն Համակարգի կողմից ձևավորված և ծածկագիր ստացած Հայտերը:

5. Նախագծերի գիտական փորձաքննությունը

5.1. Հայտերը ենթարկվում են անկախ գիտական փորձաքննության՝ հայկական կողմի ներկայացրած Հայտերը՝ Կոմիտեի, իսկ ռուսական կողմինը՝ Հիմնադրամի կողմից: Հայտերի անկախ փորձաքննությունը յուրաքանչյուր կողմ անցկացնում է ինքնուրույն՝ սեփական փորձագիտական համակարգի միջոցով: Փորձաքննությունն անցկացվում է գաղտնի: Հայտատուին իր ներկայացրած նախագծի փորձաքննության արդյունքերը կտրամադրվեն առցանց միայն մրցույթի արդյունքները վերջնական ամփոփելուց և հրապարակելուց հետո:

5.2. Հայկական կողմում մրցույթի տեխնիկական պայմանները բավարարող Հայտերը տրամադրվում են Հայտերի գնահատման նպատակով Կոմիտեի նախագահի հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհուրդ (այսուհետև՝ Խորհուրդ) Կոմիտեի փորձագետների շտեմարանում ընդգրկված փորձագետների ներգրավմամբ գիտական փորձաքննությունն իրականացնելու համար:

5.3. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում է նախագծի գիտական և գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում հետազոտական խմբի ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման

համապատասխանությունը նախագիծն իրականացնելու համար, երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնագետների ընդգրկվածությունը, նախագծի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններով պայմանավորված այլ դրույթներ:

5.4. Փորձաքննությունն իրականացնելիս փորձագետն առաջնորդվում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկով (Հավելված N 4)

5.5. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն 2 (երկու) փորձագետի կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետն առցանց լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին: Փորձագետի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի մինչև 85 տոկոսը:

5.6. Երկու փորձագետների գնահատականները գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50% և ավելի չափով տարբերվելու դեպքում Հայտը տրվում է երրորդ փորձագետին՝ գիտական փորձաքննության: Այդ դեպքում, գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է:

5.7. Ղեկավարի և մասնակիցների մասնագիտական որակավորումը և համապատասխանությունը Հայտի գիտական խնդիրները լուծելուն գնահատվում է Խորհրդի կողմից, որի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի մինչև 15 տոկոսը:

5.8. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է:

5.9. Ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ընդհանուր քանակը որոշվում է հիմնվելով երկու կողմերի փորձաքննության արդյունքների վրա և ելնելով Մրցույթի համար նախատեսված յուրաքանչյուր կողմի ֆինանսական միջոցների հնարավորություններից:

5.10. Տեղեկությունները Հայտի բովանդակության և փորձաքննության արդյունքների մասին գաղտնի են: Կոմիտեի աշխատողները, Խորհուրդը և փորձագետները իրավունք չունեն բացահայտել դրանք: Ղեկավարները կարող են ծանոթանալ փորձագիտական եզրակացությունների հետ Մրցույթի ավարտից և Հայտի

երաշխավորման կամ մերժման որոշում ընդունելուց հետո: Կոմիտեն չի ծավալում քննարկումներ փորձաքննության արդյունքների և փորձագիտական եզրակացությունների շուրջ:

Ուշադրություն. Հիմնադրամի կողմից ռուսական կողմի որևէ հայտատուի ներկայացրած նախագծին ֆինանսական աջակցություն հատկացնելու հրաժարման դեպքում՝ Կոմիտեի կողմից նախագծի ֆինանսավորման հարցը քննարկման ենթակա չէ:

5.11. Ֆինանսավորման չերաշխավորված Հայտերը չեն վերադարձվում:

5.12. Սույն Մրցույթի շրջանակներում արդյունքների բողոքարկման փուլ նախատեսված չէ:

6. Ֆինանսական և այլ պայմանները

6.1. Սույն Մրցույթի արդյուքները կամփոփվեն **2015 թ. 1-ին եռամսյակում**:

6.2. Կողմերից յուրաքանչյուրը ֆինանսավորում է իր կողմի գիտական խմբի աշխատանքների հետ կապված ծախսերը: Նախագծերի ֆինանսավորման ժամկետը մինչև **2 տարի է (12 կամ 24 ամիս):**

6.3. Հայկական գիտական խմբի տարեկան ֆինանսավորման առավելագույն ծավալները կազմում են **2 250,0**, **3 375,0** և **4 500,0** հազար ՀՀ դրամ՝ համապատասխանաբար 2, 3 և 4 անձից բաղկացած գիտական խմբերի համար:

6.4. Աշխատանքի վարձատրության համար հատկացված առավելագույն տարեկան գումարը չպետք է գերազանցի **1 680,0, 2 520,0** և **3 360,0,** հազար ՀՀ դրամը՝ համապատասխանաբար 2, 3 և 4 անձից բաղկացած գիտական խմբերի համար:

6.5. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված գումարը կարող է բաշխվել «Սարքեր և նյութեր», «Գործուղումներ» ու «Ենթապայմանագրային համագործակցություն» բաժիններում:

6.6. Գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ օտարերկրյա պետություններում հանդիպումներին կամ գիտական միջոցառումներին մասնակցելու համար և չպետք է գերազանցի գիտական ծրագրի տարեկան ֆինանսավորման ընդհանուր գումարի **20** տոկոսը: Գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերն անհրաժեշտ է հիմնավորել ֆինանսական «Նախահաշվի մեկնաբանություն» ենթաբաժնի մեջ: Մինչև

2 (երկու)շաբաթ տևողությամբ գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը հաշվարկվում է ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման հավելվածով սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար Խմբի անդամները կարող են հայցել ամսական մինչև 1500,0 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակահատվածը չպետք է գերազանցի երկու ամիսը (տարեկան կտրվածքով):

6.7. «Սարքեր և նյութեր» բաժնում հնարավոր է ներառել ծախսեր գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի, սարքավորումների և գրենական պիտույքների ձեռքբերման համար: 100,0 հազար ՀՀ դրամը գերազանցող ծախսերը անհրաժեշտ է հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության ենթաբաժնի մեջ՝ հայերենով և անգլերենով:

6.8. «Ենթապայմանագրային համագործակցություն» բաժնում կարելի է նախատեսել միջոցներ միայն **փորձարարական** բնույթի նախագծերի համար: Ենթապայմանագրային համագործակցության բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց անուններն անհրաժեշտ է թվարկել և՛ հայերենով, և՛ անգլերենով, իսկ «Ֆինանսական նախահաշվի մեկնաբանություն» ենթաբաժնի մեջ ներկայացնել համագործակցության բնույթը, ակնկալվող արդյունքները, ինչպես նաև հիմնավորել ենթապայամանգրային համագործակցության շրջանակներում ձեռքբերվելիք նյութերի և ծառայությունների անհրաժեշտությունը:

6.9. «Այլ ծախսեր» բաժնով նախատեսված գումարի մինչև 7%-ը հատկացվում է կազմակերպությանը (կամ բուհին)՝ վերադիր ծախսերի համար:

6.10. Ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի Ղեկավարները պետք է ներկայացնեն ընթացիկ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվություններ՝ ըստ ծրագրի իրականացման պայմանագրի պահանջների և ժամկետների: Հաշվետվությունների ներկայացման կարգի մասին Ղեկավարները կտեղեկացվեն լրացուցիչ:

6.11. Ֆինանսավորման ընդհանուր ծավալի 10%-ը տրամադրվում է ծրագրի իրականացման ավարտից հետո՝ ամփոփիչ Հաշվետվության դրական եզրակացության դեպքում:

6.12. Հաջորդ տարում նախագծի ֆինանսավորման շարունակման մասին որոշումը կկայացվի ընթացիկ հաշվետվությունների Կոմիտեի և Հիմնադրամի կողմից իրականացված փորձաքննության արդյունքների հիման վրա: Ֆինանսավորման

շարունակման կարևոր պայմաններից են սահմանված ժամկետում հաշվետվություն ներկայացնելը և գրախոսվող ամսագրերում համատեղ աշխատանքների առկայությունը (**թեզիսները հաշվի չեն առնվում**):

Ուշադրություն. Կախված ընթացիկ Հաշվետվությունների արդյունքներից՝ Հիմնադրամի կողմից ռուսական կողմի որևէ ծրագրի ֆինանսական աջակցության դադարեցման մասին որոշումը հիմք է Կոմիտեի կողմից այդ ծրագրի ֆինանսավորումը դադարեցնելու համար:

6.13. Խմբի ղեկավարի 2 (երկու) և ավելի ամիս հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում ծրագրի ֆինանսավորումը կդադարեցվի: Խմբի անդամի 2 (երկու) և ավելի ամիս հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում՝ Խմբի ղեկավարը պետք է դիմի Կոմիտե **համարժեք** փոփոխություն կատարելու առաջարկությամբ:

6.14. Համատեղ ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ցանկը կհրապարակվի Կոմիտեի պաշտոնական կայքում՝ www.scs.am:

6.15. Յուրաքանչյուր հայտատու սույն Մրցույթի շրջանակներում իր ներկայացրած Հայտի փորձաքննության արդյունքներին կարող է ծանոթանալ Համակարգի միջոցով իր անձնական էջում:

Մրցույթի հայկական կողմի պատասխանատուները՝

Կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչություն

Պետ՝ Լևոն Մարդոյան

Հեռ.՝ 21 01 40 +112

Միջազգային համագործակցության բաժին

Պետ՝ Մարիանա Սարգսյան

Հեռ.՝ 21 01 40 + 115

Տեխնիկական հարցերով՝

Հեռ.՝ 21 01 40 + 108

«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2015» մրցույթին մասնակցության համար ռուսական կողմին ներկայացվող պահանջներին կարող եք ծանոթանալ **http://www.rffi.ru/** կայքից:

Հավելված N1

Հայ-ռուսական հիմնարար գիտական
հետազոտությունների համատեղ նախագծերի
«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀՌՀ-2015» մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Մաթեմատիկա

1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.3 Ֆիզիկա և աստղագիտություն

1.4 Քիմիա

1.5 Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ

1.6 Կենսաբանական գիտություններ

1.7 Այլ բնական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն

2.2 էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ

2.3 Մեխանիկա

2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն

2.5 Քիմիական տեխնոլոգիաներ

2.6 Նյութագիտություն

2.7 Բժշկական սարքաշինություն

2.8 Էկոլոգիա

2.9 Կենսատեխնոլոգիա

2.10 Նանոտեխնոլոգիա

2.11 Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 Ընդհանուր բժշկություն

3.2 Կլինիկական բժշկություն

3.3 Բժշկական կենսատեխնոլոգիա

3.4 Այլ բժշկական գիտություններ

Ուշադրություն: Ստորև բերվող բոլոր ձևերը նպատակ ունեն միայն ծանոթացնելու առցանց լրացվող ձևերի հետ և հեշտացնելու առցանց լրացնելու գործընթացը: Համակարգում ձևավորվելուց և ծածկագիր ստանալուց հետո ներբեռնված Տիտղոսաթերթը և Ֆինանսական նախահաշիվը հարկավոր է տպել, հաստատել, կնքել և կցել Կոմիտե ներկայացվող այլ փաստաթղթերին:

Ձև 1

ՀԱՅՏ

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2015» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

Հայտը հանձնված է «_____» _____ 2014թ. Ծածկագիր՝ _____
(ձևավորվում է Համակարգի կողմից)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի անվանումը (15 բառից ոչ ավելի՝ հայերենով, անգլերենով և ռուսերենով)

   Բնագավառը և մասնագիտական դասիչը (ընտրվում են Հրավերի Հավելված 1-ում զետեղված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների և մասնագիտությունների ցանկից)

   Բնույթը՝ տեսական/փորձարարական (որոշվում է Հայտի լրացման ձևը բացելու պահին)

   Հուշող (բանալի) բառեր (հայերեն, ռուսերեն և անգլերեն, յուրաքանչյուր լեզվով առնվազն 3 բառ)
2. Ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան թիվը, գիտական աստիճանը, պաշտոնը, հեռախոսը և էլեկտրոնային հասցեն (լրացվում է Ղեկավարի «Անհատական տվյալներ» բաժնում)
3. Կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գերատեսչական պատկանելիությունը, հասցեն, հեռախոսը, ֆաքսը և էլեկտրոնային հասցեն

   (Կազմակերպությունը ընտրվում է ցանկից, բոլոր տվյալները Համակարգը լրացնում է մեխանիկորեն: Բացակայության դեպքում այդ կազմակերպությունը և տվյալները լրացվում են հայտատուի կողմից՝ ընտրելով ցանկից «Այլ» տարբերակը)
4. Հայտի ռուսական կողմի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը (հայերեն, ռուսերեն և անգլերեն), ծննդյան թիվը, գիտական աստիճանը, պաշտոնը, հեռախոսը, էլեկտրոնային հասցեն, Նախագծի հետ առնչություն ունեցող գիտական հրապարակումները (առավելագույնը 5 (հինգ) հոդված՝ նշելով վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը), գիտական հետաքրքրությունների շրջանակը (ըստ ՀՀՌՀ դասիչի, http://www.rfbr.ru/rffi/ru/contest_documents)
5. Ռուսական կողմի կազմակերպության լրիվ անվանումը, գերատեսչական պատկանելությունը, կազմակերպաիրավական ձևը, հասցեն (հայերեն, ռուսերեն, անգլերեն), էլեկտրոնային հասցեն, կայք էջը
6. Այլ տվյալներ (ֆինանսական տվյալները ձևավորվում են Համակարգի կողմից Նախահաշվի հիման վրա)

Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը (1 կամ 2 տարի)

Հայկական կողմի խմբի անդամների (ներառյալ Ղեկավարը) թիվը (մինչև 4)

Ռուսական կողմի խմբի անդամների (ներառյալ Ղեկավարը) թիվը (մինչև 10)

Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը

Վերադիր ծախսերի գումարը

Հայցվող ընդհանուր գումարը

Հայկական կողմի ղեկավարի ստորագրությունը _____

Կազմակերպության ղեկավարի (կամ գիտական քարտուղարի) ստորագրությունը

«____» _____ 2014թ.

Կ.Տ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ

Հայերենով, անգլերենով և ռուսերենով համառոտ ներկայացնել նախագծի նպատակներն ու խնդիրները:

ՆԱԽԱԳԻԾ

Պատրաստվում են նախագծի հայերեն և անգլերեն տարբերակները՝ առանձին ֆայլերում առցանց լրացնելու ընթացքում ներբեռնելու համար: Ընդունելի են միայն MS Word ծրագրով պատրաստված ֆայլերը: Առցանց լրացման համակարգը Հայտը ուղարկելուց հետո դրանք կընդգրկի առցանց pdf ձևաչափով ձևավորվող Հայտի վերջնական պաշտոնական տարբերակի մեջ, որը կլինի մատչելի Հայտի լրացման էջում:

Նախագծի տեքստային մասն անհրաժեշտ է ներկայացնել 1,5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode» տառատեսակով:

Հարկավոր է ներկայացնել 14 էջի սահմաններում ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը: Անգլերենով տարբերակը կցել առանձին:

1. *8 էջի սահմաններում ներկայացնել նախագծի խնդրի դրվածքը, արդի վիճակը, գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները,*
2. *2 էջի սահմաններում նշել տվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները,*
3. *2 էջի սահմաններում նկարագրել նախագծի ռուսական խմբի կողմից իրականացվելիք խնդիրները,*
4. *Օգտագործված գրականության ցանկը:*

ՄԻՆՉԵՎ 3 ԱՆՑԱՆԿԱԼԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Թույլատրվում է նշել մինչև 3 անցանկալի փորձագետների անուն: Այս մասը գաղտնի է, հասանելի է միայն գիտական փորձաքննությունը կազմակերպողներին և չի ընդգրկվելու Հայտի պաշտոնական տարբերակի մեջ: Այն օգտագործվելու է միայն Հայտի գիտական փորձաքննությունն իրականացնող փորձագետների կազմում նշված անձանց ընդգրկելը բացառելու համար:

№	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ
1.	
2.	
3.	

Ձև 2

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍԻՆ

Ձևավորվում է Համակարգի կողմից՝ համաձայն Համակարգում գրանցված տվյալ անձի մուտքագրված անձնական տվյալների: Ղեկավարի կողմից ընտրվում են Նախագծի հետ առնչություն ունեցող մինչև 5 գիտական հրապարակումները: Համակարգի կողմից Հայտի հայերեն և անգլերեն պաշտոնական տարբերակները հաջողությամբ ձևավորելու համար յուրաքանչյուր մասնակցի անձնական տվյալները պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները.

1. Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն, ռուսերեն)
2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը (հայերեն, անգլերեն)
3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն), (հայերեն, անգլերեն)
4. Գիտական աստիճանը
5. Վերջին թեզի վերնագիրը, մասնագիտական դասիչը, պաշտպանության տարեթիվը և վայրը (հայերեն, անգլերեն)
6. Աշխատանքի վայրը, պաշտոնը (հայերեն, անգլերեն)
7. Հեռախոսը (աշխատանքային, տան, բջջային)
8. Էլեկտրոնային հասցեն
9. Նախագծի հետ առնչություն ունեցող գիտական հրապարակումները

Ձև 3

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍԻՆ

Համակարգի կողմից Հայտի հայերեն և անգլերեն պաշտոնական տարբերակները հաջողությամբ ձևավորելու համար յուրաքանչյուր մասնակցի անձնական տվյալները պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները.

1. Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն, ռուսերեն)
2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը (հայերեն, անգլերեն)
3. Գիտական աստիճանը
4. Աշխատանքի վայրը, պաշտոնը (հայերեն, անգլերեն)
5. Հեռախոս
6. Էլեկտրոնային հասցե

ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկ, հազար դրամ)									
	2015 թ., 6 ամիս			**2016 թ. 12 ամիս**			**2017թ., 6 ամիս**		
Ազգանուն, անուն, հայրանուն	Անվական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը	Անվական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը	Անվական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը
1)									
2)									
3)									
4)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում			
1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ (թվարկել 100,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը, հիմնավորվել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)	2015	2016	2017
1)			
2)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)			
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր			
2) տեղական գործուղումների օրապահիկ			
3) տեղական գործուղումների գիշերավարձ			
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր			
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ			
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ			
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			

3. ԵՆԹԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ (նշել ենթապայմանագրային համագործակցության բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, համագործակցությունը մանրամասն նկարագրել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)

Ենթապայմանագրային համագործակցության վարձավճար

	2015			2016			2017		
Ազգանուն, անուն, հայրանուն	Օրավարձ	օրերի քանակ	Պահանջվող գումար	Օրավարձ	օրերի քանակ	Պահանջվող գումար	Օրավարձ	օրերի քանակ	Պահանջվող գումար
1)									
2)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									

Ենթապայմանագրային համագործակցության նյութեր և ծառայություններ (Թվարկել 100,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր կետերը և հիմնավորել)	2015	2016	2017
1)			
2)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ			
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ (ներկայացնել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)			

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (հայերեն և անգլերեն՝ յուրաքանչյուրը մինչև 500 բառ)

Հայտի ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝
_____ _____
(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել հիմնարար գիտական հետազոտությունների հայ-ռուսական համատեղ նախագծերի **«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2015»** միջազգային մրցույթին -----ծածկագրով առցանց ներկայացված Հայտի պահանջվող փաստաթղթերը.

- Տիտղոսաթերթ
- Ֆինանսական նախահաշիվ
- խմբի մինչև 35 տարեկան մասնակցի ասպիրանտ կամ ուսանող հանդիսանալու մասին տեղեկանք (ներ):

Դիմող՝_____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2014 թ.

Փորձագիտական եզրակացություն, հայտ _____

Ղեկավարի ազգանունը _____

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, ամբողջ թվերով, առավելագույնը 5 միավոր **(0,5 միավորի ճշտությամբ),** հետևյալ սանդղակով.

0	*Հարցի պատասխանը **բացակայում է** կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:*
1	***Շատ վատ:*** *Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:*
2	***Վատ:*** *Հարցի պատասխանը բավարար չէ նրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:*
3	***Միջին:*** *Պատասխանը ընդհանուր առմամբ բավարարում է հարցի պահանջներին, բայց կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:*
4	***Լավ:*** *Հարցի պատասխանը առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:*
5	***Գերազանց:*** *Պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:*

Հարցաշար

1.	**Նպատակներ**: Որքանո՞վ է հիմնարար առաջարկվող գիտական հետազոտությունը:	
2.	**Արդիականություն**: Որքանո՞վ է արդիական առաջարկվող հետազոտությունը:	
3.	**Նորույթ**: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող հետազոտությունը:	
4.	**Իրագործելիություն:** Որքանո՞վ է իրատեսական հետազոտության նպատակներին հասնելը առաջարկվող ժամանակահատվածում:	
5.	**Ծրագիր:** Որքա՞ն հստակ է ձևակերպված գիտական ծրագիրը, և որքանո՞վ է ապահովված խմբերի իրական համագործակցությունը:	
6.	**Համապատասխանություն**: Որքանո՞վ է համապատասխանում գիտական ծրագիրը հետազոտության նպատակների իրականացմանը:	
7.	**Իրականացում**: Որքանո՞վ է իրատեսական առաջարկվող գիտական ծրագրի իրականացումը:	
8.	**Առնչություն այլ բնագավառների հետ:** Որքանո՞վ է գիտական ծրագիրը նպաստում տվյալ բնագավառին հարակից բնագավառների առաջընթացին:	
9.	**Նորարարական կարևորություն:** Որքանո՞վ է գիտական ծրագիրը նորարարական (գիտության հետագա զարգացում, տեխնոլոգիական արտադրանքների, սիստեմների և մեթոդների բարելավում, զգալի տնտեսական կամ հասարակական ազդեցություն):	
10.	**Իրականացման մեթոդներ:** Որքանո՞վ են առաջարկվող մեթոդները համապատասխանում գիտական ծրագրին:	
11.	**Իրականացման փուլեր:** Որքանո՞վ են համապատասխանում իրականացման փուլերը գիտական ծրագրին:	
12.	**Իրականացման փուլերի վերահսկելիություն:** Որքանո՞վ է իրատեսական գիտական ծրագրի փուլերի վերահսկելիությունը:	
13	**Երիտասարդ մասնագետներ:** Որքանո՞վ են համապատասխանում խմբում ընդգրկված երիտասարդ մասնագետների (մինչև 35 տարեկան), ասպիրանտների, ուսանողների մասնագիտական ուղղվածությունը գիտական ծրագրի իրականացմանը:	
14.	**Տեխնիկական ապահովվածություն:** Որքանո՞վ է գիտական խումբն ապահովված տեխնիկական միջոցներով:	
15.	**Համագործակցություն:** Ի՞նչ մակարդակի վրա է գտնվում երկկողմ համագործակցությունը (վերջին 10 տարիներին համատեղ հրապարակումների առկայությունը):	
16.	**Արդյունքների տնօրինում:** Որքա՞ն հստակ է ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը. արդյունքների օգտագործում և տարածում (հրապարակումներ, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
17.	**Նախահաշիվ:** Որքանո՞վ է հատկացվող ֆինանսավորման ծավալը բավարար գիտական ծրագրի իրականացման համար:	
	Փորձագետի գնահատական (17 գնահատականների գումարը)	

Փորձագետի մեկնաբանություններ (պարտադիր է, ծավալը չի սահմանափակվում) _____

Փորձագետ _____ Ամսաթիվ_____

Խորհրդի եզրակացություն

1.	**Գիտական ծրագրի ղեկավար:** Որքանո՞վ է համապատասխանում հայկական կողմի ղեկավարի մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
2.	**Գիտական ծրագրի կատարողներ:** Որքանո՞վ է համապատասխանում հայկական կողմի կատարողների մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
3.	**Ռուսական խումբ:** Որքանո՞վ են համապատասխանում ռուսական կողմի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
	Խորհրդի անդամի գնահատականը (3 գնահատականների գումարը)	
	Վերջնական գնահատական (Փորձագետի և հանձնաժողովի գնահատականների գումարը)	

Խորհրդի անդամ(ներ)_____

(անուն, ազգանուն) (ստորագրություն) Ամսաթիվ_____